ԼՈՒՐԵՐ

Մարտի 2-ին, հինգշաբթի.- Մրրոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը: Հընթացս Պատարագի տեղի ունեցած սարկավագական ձեռնադրությունից հետո պատարագիչ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Եւ լուայ զբարբառ Տեառն, որ ասէր. Զո՞ առաքեցից եւ կամ ո՞վ երթիցէ առ այն ժողովուրդ» (Եսայի Զ 8) բնաբանով:

Մարտի 5-ին, կիրակի.- Բուն Բարեկենդան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Ներսեհ արեղա Խալաթյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը քարոզ խոսեց՝ «Յորում ցնծայր զուարճացեալ անդիմադրական խնդութեամբ» (Շարական) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մարտի 8-ին, չորեքշաբթի.- Գ. օր Մեծի Պահոց:

Այսօր, առավոտյան, Վեհափառ Հայրապետի մասնակցությամբ Մայր Տաճարում կատարվեց Մեծի Պահոց առաջին Արևագալի ժամերգությունը:

Մարտի 12-ին, կիրակի.- Բ. կիր. Քառասնորդական Պահոց (Արդարամտաց):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովսեփ քահանա Ալեքսանյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը քարոզ խոսեց՝ «Ճաշակմամբ պտղոյն ճաշակեցին զդառնութիւն մեղաց եւ մահու» (Շարական) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մարտի 16-ին, հինգշաբթի.- Ժ.Ա. օր Մեծի Պահոց:

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հավաք, որի ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ միաբանության առօրյա կյանքի որոշ կանոնակարգումների:

Մարտի 19-ին, կիրակի.- Գ. կիր. Քառասնորդական պահոց (Անառակին):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշեն արեղա Սանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Շահե արք-

եպս. Աճեմյանը քարոզ խոսեց՝ «Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո» (Ղուկ. ԺԵ 21) բնաբանով (տե՛ս էջ 59):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մարտի 21-ին, երեքշաբթի.- ԺԶ. օր Մեծի Պահոց:

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ սարկավագական հավաք, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը որոշ տնօրինություններ կատարեց բանակ զորակոչվող սարկավագների վերաբերյալ:

Մարտի 26-ին, կիրակի.- Դ. կիր. Քառասնորդական Պահոց (Տնտեսին):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Ներսեհ աբեղա Խալաթյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Թադեոս վրդ. Ջիրեկյանը քարոզ խոսեց՝ «Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան» (Ղուկ. ԺՁ 9) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: